# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**իրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի ապրիլի 02-ի N 2 արձնագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԳՀԾՁԲ-26/30**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար աուդիտորական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԳՀԾՁԲ-26/30 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով իրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Գնման ընթացակարգի իրավերում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու:

**Փոփոխության նկարագրություն:** Տեխնիկական բնութագիրը անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն Հավելված 1-ի՝

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 13)
Էլ. փոստ՝ a.hovhannisyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ

**ՀԱՎԵԼՎԱԾ 1**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Չ/հ | Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | Հասցեն | Ժամկետը* |
| 1 | 79211150/501 | Ֆինանսական աուդիտորական ծառայություններ | Ֆինանսական աուդիտորական ծառայություններ.<br><br>**1. Նպատակները**<br>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (այսուհետև «Ընկերություն») մտադիր է ներգրավել Աուդիտորի (այսուհետև՝ «Աուդիտոր»)՝ Ընկերության հաշվապահական հաշիվները ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների վերահաստատման և հիմնական տվյալների ներկայացմամբ աուդիտի իրականացման նպատակով:<br><br>Առաջադրանքի նպատակները, մասնավորապես, հետևյալն են.<br>• Ընկերության 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշիվների վերահաստատում, ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների՝ համապատասխան համապարփակ ծանոթագրությունների ներկայացմամբ, որոնց վրա հիմնվելով Բանկը կարող է գնահատել Ընկերության վարկունակությունը, և վերը նշված տարվա համար Ընկերության ֆինանսական հաշիվների աուդիտի իրականացում:<br><br>***2. Աշխատանքների շրջանակ***<br>2.1 Ընկերության հաշվիների վերագնահատում և վերահաստատում. Աուդիտորը պետք է ներկայացնի Ընկերության ՀՀ ֆինանսական հաշվետվողականության համաձայն կազմված ֆինանսական բոլոր հաշվետվությունները և հաշվապահական հաշիվները 2025 թվականի համար՝ ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների:<br><br>Ցանկացած վերահաստատում կամ վերագնահատում պետք է ուղեկցվի համապատասխան հիմքերի և կիրառվող մեթոդաբանության մանրամասն նկարագրությամբ: Վերահաստատված ֆինանսական հաշվետվությունները և | դրամ | | 1 | ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 | Պայմանագիրը կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագիրն/համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2026թ. հուլիսի 1-ը: |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հաշվապահական հաշիվները պետք է ներկայացվեն տեղական արժույթով և եվրոյով, ուղեկցվեն մանրամասն ծանոթագրություններով, ինչպես դա նկարագրված է 2.3 բաժնում՝ ստորև:<br><br>2.2 Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ.<br>Աուդիտորը պետք է իրականացնի Ընկերության 2025 թվականի հաշվապահական հաշիվների աուդիտ, ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների: Իր աուդիտորական եզրակացության մեջ Աուդիտորը պետք է նշի թե որքանով է իրեն տրամադրված տեղեկատվությունը ճշգրիտ և ամբողջական:<br>2.3 Ընկերության ֆինանսական հաշվետվություններին վերաբերող ծանոթագրություններ.<br>Աուդիտորը պետք է արտացոլի և վերահաստատի 2025 թվականի ֆինանսական հաշվետվությունը և հաշվապահական հաշիվները, ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների: Ցանկացած վերահաստատում կամ վերագնահատում պետք է ուղեկցվի համապատասխան հիմքերի և կիրառվող մեթոդաբանության մանրամասն նկարագրությամբ: Սրա նպատակն է  Բանկի համար պարզեցնել ընկերությունների ֆինանսական և գործառնական ցուցանիշների գնահատումը: Վերահաստատված ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշիվները պետք է ներկայացվեն տեղական արժույթով և եվրոյով, ուղեկցվեն մանրամասն ծանոթագրություններով՝ բավարարելով ստորև նշված պահանջները.<br><br>2.3.1. Եկամուտների բացվածք<br>- Ուղևորավճարների և այլ վճարների որոշման ներկայիս ընթացակարգի նկարագրություն և գնահատում:<br>- Բոլոր գործառնական ծախսերի ամբողջական փոխհատուցման տեսանկյունից վճարների բավականաչափ լինելու առումով, տեխսպասարկման ծախսերի, պաշարների նորացման և անհուսալի պարտքերի պահուստավորման վերլուծություն և ներկայացում:<br>- Յուրաքանչյուր սպառման խմբի և ծառայությունների կատեգորիայի համար վճարների մշակում՝ համապատասխան եկամուտների ստացման նպատակով: Պետք է նշել հնարավոր ապագա վճարների բարձրացման հավանականության մասին (եթե այդպիսի հնարավորություն կա):<br>- Ուղևորների քանակը,  ըստ կատեգորիաների, ամիսների և, եթե հնարավոր է, յուրաքանչյուր երթուղու բեռնվածության ցուցանիշի ներկայացում: | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | - Ցանկացած այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտների նկարագրություն:<br>- Ցանկացած ստացված սուբսիդիաների նկարագրություն (ստացման հիմքերի և դրանց օգտագործման նշմամբ):<br>- Ցանկացած արտոնությունների համակարգի նկարագրություն և, մասնավորապես, այդպիսի համակարգերի գնահատում ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների:<br><br>2.3.2. Դուրս գրված հաշիվներ մուտքերի դիմաց<br>- Յուրաքանչյուր սպառողական խմբի համար դուրս գրված հաշիվներ մուտքերի դիմաց հարաբերակցության ամփոփում, ընդ որում, մուտքերը պետք է բացվեն ըստ կանխիկ և անկանխիկ գործառնությունների:<br>- Յուրաքանչյուր սպառողական խմբի համար, մասնավորապես նախընտրած սակագներով օգտվող ուղևորների խմբից ստացվող հաշիվների շարժի ամփոփում (եթե կա):<br>- Յուրաքանչյուր հաճախորդների խմբից ստացվող հաշիվների բացվածքի ներկայացում՝ ըստ տարիքային/վաղեմության գործոնի (եթե կա):<br>- Բոլոր այն դեբիտորների ցանկի ներկայացում, որոնց պարտքը գերազանցում է՝ ընդհանուր դեբիտորական պարտքերի հինգ տոկոսը: Պահանջվում է ներկայացնել նաև տասը ամենմեծ պարտքերը ունեցող դեբիտորներին:<br>- Ստացվելիք հաշիվների հավաքման հավանականության գնահատում և անհուսալի պարտքերի հաշվեգրում ըստ Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների:<br>- Ցանկացած սուբսիդիայի և արտոնությունների նկատմամբ հաշվեգրված և կանխիկի հետ կապված իրավիճակի ներկայացում և գնահատում:<br>- Ուղևորավճարների/վճարների վճարումից խուսափման դեպքերի ներկայացում:<br><br>2.3.3. Ծախսերի բացվածք<br>- Փոխադրման ծառայությունների գործառնական ծախսերի բացվածքի ներկայացում: Ծախսերի, մասնավորապես տեխսպասարկման ծախսերի հետ կապված կարևորագույն փոփոխությունների պարզաբանումների ներկայացում: Վառելիքի միջին գների, եթե դա կիրառելի է, ներկայացում: | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | - Աշխատակազմի թվի, շահագործման և վարչական ստորաբաժիններում (մանրամասն թվարկմամբ) նրա բաշխվածության ներկայացում:<br>- Այլ ընկերություններից ծառայությունների գնման դեպքում կարևորագույն պայմանագրերի հիմնական դրույթների նկարագրություն:<br>- Յանկացած ոչ գործառնական ծախսերի, ոչ սովորական ծախսերի՝ ներառյալ հարկերի և ուշացված վճարնեի համար տրված տուգանքների ներկայացում:<br><br>2.3.4. Ակտիվների գնահատում, հիմնական միջոցներ, կապիտալ ծախսեր և մաշվածք<br>- Հիմնական ակտիվների (առանց սեփականության պատկանելության նշման կամ գնահատման) և հիմնական միջոցների շարժի՝ այն է ավելացման, օտարման և մաշվածքի նկարագրություն:<br>- Կապիտալ ծախսերի բացվածք՝ ըստ կատեգորիաների և ֆինանսավորման աղբյուրների:<br>- Ընկերության կողմից մաշվածքային գործակիցների հաստատում և կիրառվող ամորտիզացիայի մեթոդաբանության նկարագրություն:<br>- Յուրաքանչյուր կատեգորիայի ակտիվների նկարագրություն՝ ըստ շահագործվող սարքավորումների ծառայության ժամկետի. հիմնական միջոցների և շարժակազմի տվյալների տարբերության բացվածքի ներկայացում:<br>- Յուրաքանչյուր ակտիվի հետ կապված տեխսպասարկման ծախսերի նկարագրություն և տվյալ ակտիվի արժեքի նկատմամբ տեխսպասարկման ծախսերի ներկայացում:<br><br>2.3.5. Կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ<br>- Կրեդիտորական պարտքերի և այլ պարտավորությունների, օրինակ՝ երկարաժամկետ և կարճաժամկետ պարտքերի /ըստ կատեգորիայի ու վաղեմության ժամկետի/ բացվածքի ներկայացում:<br>- Բոլոր խոշոր կրեդիտորական պարտքերի, որոնք գերազանցում են ընդհանուր պարտքերի տասը տոկոսը, ինչպես նաև հինգ կարևորագույն կրեդիտորների ներկայացում:<br><br>2.3.6. Հարկեր<br>- Եկամուտների և ծախսերի դիմաց (կանխիկի կամ հաշվագրման կարգը) ԱԱՀ-ի հարկման ներկայումս կիրառվող կանոնների և պրակտիկայի նկարագրություն:<br>- Հիմնական հարկերի (ներառյալ շահութահարկը և գործառնական հարկերը) հաշվարկման մեթոդաբանության նկարագրություն: | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 2.3.7. Եկամուտների և բանկային հաշվի շարժի վերստուգում<br>- ՀՀ հաշվապահական ստանդարտների և Ֆինանսական հաշվետվողականության միջազգային ստանդարտների միջև եկամուտների վերստուգման ամփոփում:<br>- Բանկային հաշիվների շարժի ամփոփում:<br><br>2.3.8. Շահաբաժնային քաղաքականություն<br>- Ընկերության կողմից օրենքի կամ կանոնադրության համաձայն և կամ սեփական հայեցողությամբ կիրառվող շահաբաժնային քաղաքականության նկարագրություն:<br>- Շահութաբաժինների հետ կապված գործընթացների, դրանք իրականացնող մարմինների և հաստատման կարգի նկարագրություն:<br><br>2.4 Պարզաբանումներ<br>Բանկի կողմից պահանջելու դեպքում, Աուդիտորը պարտավոր է տրամադրել պարզաբանումներ իր կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ:<br><br>**3. Հատուկ պահանջներ**<br>Աուդիտ իրականացնող անձը կարող է հանդիսանալ ընկերություն կամ ընկերությունների միավորում /կոնսորցիում/, ինչպես նաև «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի համաձայն հանդիսանա հավատարմագրված մասնագիտացված կառույցի անդամ և ներառված լինի մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում՝ https://minfin.am/hy/page/auditorneri_pordzaget_hashvapahneri_ev_auditorakan_kazmakerpu-tyunneri_miasnakan_reestr/:<br>Կատարողի՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորների խմբում պետք է ունենա նվազագույն մեկ՝ ACCA միջազգային որակավորմամբ մասնագետ, նվազագույն մեկ՝ գնումների օրենսդրության իմացությամբ և գնումների համակարգողի որակավորմամբ մասնագետ:<br>Աուդիտ իրականացնող աշխատանքային խմբում ներգրավված Պատասխանատու աուդիտորը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և ACCA որակավորման համար անհրաժեշտ քննություններից առնվազն կեսը հանձնած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ/վկայական և/կամ Հայաստանի | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից տրված աուդիտորի որակավորման վկայական:<br>**Մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:**<br>***Հաշվետվությունը պետք է ներկայացվի հայերեն և անգլերեն լեզուներով:***<br><br>**4. Իրականացման ժամկետ**<br>Առաջադրանքի կատարման ակնկալվող ընդհանուր տևողությունը մինչև 2026թ. հուլիսի 1-ը: | | | | | |

* Սույն գնման ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները: